ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի հ. 34-Ն որոշման 1-ին կետով սահմանվել է Երևան քաղաքի վարչական շրջանի ղեկավարին կից հասարակական կարգով գործող խորհրդակցական խորհուրդների կազմավորման և գործունեության կարգը, լիազորությունները:

Սույնով Երևանի Աջափնյակ վարչական շրջանը հրավիրում է հասարակական կազմակերպությունների, իրավաբանական անձանց միությունների, բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների ներկայացուցիչներին և Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի հ. 34-Ն որոշման հավելվածի 2-րդ կետում նշված բնագավառների համապատասխան մասնագետներին մասնակցել վերը նշված խորհրդակցական խորհրդի աշխատանքներին՝ դրանց կազմում ընդգրկվելու միջոցով:

Խուրհրդի կազմում ընդգրկվելու /Երևանի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի որոշմամբ նշանակվելու/ համար դիմումներն անհրաժեշտ է ներկայացնել մինչև 2013 թվականի սեպտեմբերի 28 ը ներառյալ հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Արա Սարգսյան 5, ընդ որում՝

ա/ իրավաբանական անձինք դիմումին կից ներկայացնում են՝ իրավաբանական անձի գրանցման պետական ռեգիստրի վկայականի պատճենը և, եթե խորհրդակցական խորհրդի կազմում ցանկանում է ընդգրկվել իրավաբանական անձի գործադիր մարմինը /տնօրենը, գործադիր տնօրենը, գլխավոր տնօրենը, կառավարիչը, նախագահը և այլն/, ապա անհրաժեշտ է ներկայացնել վերջինիս անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձի այլ աշխատակցի դեպքում՝ իրավաբանական անձի գործադիր մարմնի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագիրը:

բ/ ֆիզիկական անձինք՝ դիմումին կից ներկայացնում են անձնագրի պատճենը և համապատասխան բնագավառի մասնագիտությանը տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթղթի պատճենը /դիպլոմ, վկայական և այլն/:

Մանրամասներին կարող եք ծանոթանալ Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի հ. 34-Ն որոշումից կամ զանգահարել 010-39-46-60 հեռախոսահամարով: